

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԿԵՆՈՆԱԳԻՐ - ԾՐԱԳԻՐ  
ՍԵԲԱՍԻՈՅ ՎԵՐԱՇԻՆՈՒԹԵԱՆ  
ՄԻՈՒԹԵԱՆ



1931 - 1932



Հիմնուած 1919-ին եւ  
վաւերացուած Միացեալ Նահանգներու  
Կառավարութեան կողմէ նոյն տարին :



Նիւ Եորք  
1931

0621(=91.99)  
Ա - 33

4625

062 (=91.99)


U-33

14506



18016-58

06 JUN 2009



Ս. Նշանի վանքը

—0—

## ԿԱՆՈՆԱԳԻՐ - ԾՐԱԳԻՐ

ԱՆՈՒՆ

Միութեանս անունն է Սեբաստիան Վերածինմիա  
թեան Միութիին:

ՆՊԱՏԱԿ

1. — Հայաստանի մէջ նոր Սերաստիա մը հիմնել :
2. — Սերաստացիներու կըթական, բարոյական և  
նիւթական բարելաւման սատարել, հայթայթելով բո-  
լոր միջոցները որոնցմով կարելի կ'ըլլայ զիրենք ինք-  
նադահ դարձնել:

ԳՈՐԾԱԿԱՆ ԱՆՁԱՆՏ

3. — Բարոյական և նիւթական անմիջական օգ-  
նութիւն հասցնել «Սեբաստիայէն» տարագրուած և

թէ Սերաստիոյ մէջ զտնուած կարօտ Հայերուն՝ մարմիններու միջոցաւ:

4.— Տարագրուած Սերաստացիները յարմար միջավայրերու մէջ հաւաքել, ևթէ իրենց ներկայ բնակավայրերը ապահով չեն:

5.— Երբ միջոցները կը ներեն Նոր-Սերաստիոյ մէջ վերականգնել Սերաստիոյ բարեսիրական հաստատութիւնները (հիւանդանոց, դպրոց եւ որբանոց), ճիմնել արհեստանոցներ չքաւորներու օգնելու համար:

6.— Սերաստիոյ Վերաշ. Միութեան Կեղր. Վարչութիւնը եւ կամ Մասնաճիւղերու Վարչութիւնները որեւէ կուսակցական բնոյթ կրող ձեռնարկներու, պաշտօնապէս, պէտք չէ մասնակցին:

#### ԵԿԱՄՈՒՏ

7.— Միութեան եկամուտը պիտի կազմեն 1) Անդամակիցարները, 2) Հանդանակութիւններ, 3) Նուէրներ, 4) Այս նպատակին համար սարգուած հանդէսներ, 5) Արհեստանոցներու արտագրութիւններէն դոյցած հասոյթներ, եւայլն:

#### ԱԳՐԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

8.— Ամէն «Սերաստացի» կրնայ անդամակցիւ, ևթէ կ'ընդունի Միութեան կանոնագիրը:

9.— Որեւէ անհատ կրնայ պատուոյ անդամ զառնալ առնուազն 50 տոլար վճարելով չառանց քուէտու եւ քուէտու ըլլալու:

10.— Այս անդամները, որոնք 18 տարին լրացուցած են, կրնան քուէտու առաջ առանալ:

11.— Ամերիկայի ըրջանին մէջ իւրաքանչիւր անդամ պարտի վճարել ամսական 25 սէնթ, տիկնանց մասնաճիւղի անդամները պարտին վճարել ամիսը 10 սէնթ: Իսկ արտասահմանի մէջ, տեղին մասնաճիւղին որոշման համեմատ:

12.— Քուէտու առնելու եւ տալու իրաւունքն ունին այն անդամները, որոնք Միութեանս անդամակցած են օրինաւորապէս, քուէտարկութենէն առնուազն երեք ամիս առաջ:

13.— Այս անդամը, որ մինչեւ մէկ տարի առանց բանաւոր պատճառի չի վճարեր իր անդամատուրքը, եւ իր բարոյական պարտաւորութիւնները եւս չի կատարեր, կը զրկուի քուէտ տալու եւ առնելու իրաւունքն, եւ եթէ իրեն անդամատուրքի համար եղած դիմումները անպատճախան թողու մինչեւ երկու տարի, յիշեալի անունը անդամոց ցանկէն կը ձկուի:

#### ՄԱՍՆԱՃԻՒՊԵՐ

14.— Որեւէ քաղաքի կամ գիւռաքաղաքի մէջ, ուր առնուազն հինգ կամ աւելի Սերաստացիներ կան, միասին զարով, Կեղրոնական Վարչութեան վաւերացումով, կրնան մասնաճիւղ մը կազմել:

15.— Տիկիններ կրնան զատ մասնաճիւղ կազմել, արանց մասնաճիւղերու աջակցութեամբ եւ Կեղրոնական Վարչութեան վաւերացումով:

16.— Անդամական ժողովները օրինական պիտի համարուին երբ քուէտու անդամներու մէկ վեցերորդը եւ առնուազն 4 անդամ ներկայ ըլլան:

17.— Մասնաճիւղեր իրենց հասոյթի մէկ մասը տեղական անհրաժեշտ պէտքերու յատկացնելէ վերջ՝ մնացածը պարտաւոր են կեղրոն դրկել:

18.— Ամէն մասնաճիւղ պարտի իր վեցամսեայ տեղեկագիրը եւ հաշուեկշխոր իր հասոյթին հետ, կեղրոնական Վարչութեան դրկել:

19.— Մասնաճիւղեր պարտին իրենց բացառիկ հասոյթները (հանդէսներէ, պարահանդէսներէ, զաշտային հանդէսներէ գոյացած զուտ շահերը, դրամական նուէրները, հանդանակութիւններու եւ վիճակահանութիւններու, եւայլն, այդ կարգի հասոյթներ), նոյնութեամբ եւ կարելի եղածին չափ շուտով, կեղրոն փոխադրել:

20.— Մասնաճիւղեր լուծուած կը համարուին երբ անդամներու թիւը հինգէն կը նուազի: Այդ պարագային մնացած անդամները պարտին իրենց քով գտնուած դրամը, գոյքը, եւայլն, յանձնել կեղր: Վարչութեան եւ իրենք կրնան դրացի մասնաճիւղին անդամակցիլ:

21.— Մասնաճիւղեր պէտք է իրենց բացառիկ կամ հանրային ձեռնարկները կեղրոնական Վարչութեան հետ խորհրդակցարար ընեն:

22.— Մասնաճիւղերու վարչութիւնը կը բաղկանայ ընդհանուր ժողովներու մէջ ընտրուած Յէին 7 անձերէ, որոնք կ'ընտրեն իրենց դիւանը: Պաշտօնավարութեան ըջանը մէկ ատարի է եւ պաշտօնեաները վերընտրելի են:

23.— Վարչութեան պարտականութիւնն է կանոնագրի տրամադրութիւնները գործնականացնել եւ

մասնաճիւղի գործերը վարել, թղթակցութիւններ կատարել կեղրոնի հետ, եւայլն:

24.— Վարչութեան Ատենապետի պաշտօնն է ստորագրել պաշտօնական դրութիւնները Ատենապերին հետ:

25.— Ատենապերին պաշտօնն է անդամական եւ վարչական ժողովներու արձանագրութիւնները կազմելու պահէլ, թղթակցութիւններ կատարել, եւ ստորագրել պաշտօնական դրութիւնները Ատենապերին հետ:

26.— Գանձապահին պաշտօնն է գանձուած անդամասուրքերու փխարբէն ստացագիր տալ, դրամական գործառնութիւններու հոկել, մասնաճիւղի ծախքերը հոգալ եւ մասնաճիւղի եւեւմուտքի տոմարին մէջ մաքուր կերպով արձանագրել:

27.— Իւրաքանչիւր վարչութիւն իր տարեշրջանը լրանալուն պարտական է իր Տեղեկագիրը ներկայացնել անդամական ժողովին:

28.— Իւրաքանչիւր մասնաճիւղ պարտական է առնուագն երեք ամիսը անդամ մը Անդամական ժողով դումարել:

29.— Մասնաճիւղերու տարեշրջանը կ'սկսի Փետր. 1-ին եւ կը վերջանայ Յունուար 31-ին: Տարեգլխու հաշուեկշխոնները՝ վճարող անդամներու ցանկին հետ, պէտք է կեղրոն դրկուին՝ առ առանձին մինչեւ Մարտ 15:

30.— Երբ մասնաճիւղի մը մէծութեան պատճառով, անդամասուրքերու գտնածումի համար, գանձա-

պահի պաշտօնը կը ծանրաբեռնուի, մասնաւոր հաւաքիչ մը կը նշանակուի յարմար վարձադնով:

31.— Մասնաճիւղերը քոյր մասնաճիւղերու հեա ուղղակի յարաբերութեան մէջ մտնելու չեն, Միութեան Կեդրոնական Վարչութեան վերաբերեալ դործերու չուրջ, բացի ստիպովական պարագաներէ, որոնց միջոցին, Կեդրոնական Վարչութեան իմացնելու են հարցը եւ շարժառիթը:

#### ԿԵՐՈՌԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

32.— Կեդր. Վարչութիւնը կ'ընտրուի դադտնի քուէով եւ Պատգամաւորական Ժողովէն, կը բազկանայ ինը անդամներէ՝ որոնք կ'ընտրեն իրենց դիւնելը, եւ վերընտրելի են:

33.— Կեդրոնական Վարչութեան անդամներու պաշտօնավարութեան շրջանը մէկ տարի է եւ վերընտրելի են:

34.— Կեդրոնական Վարչութիւնը իր տարեշրջանը լրանալէ, առնուաղն ամիս մը առաջ, պարտաւոր է հրաւերել Պատգամաւորական Ժողովի բոլոր մասնաճիւղերը. Հակառակ պարագային, երեք մասնաճիւղեր, Կեդր. Վարչութեան դիմում՝ ընելիք ետք իրաւունք կ'ուկենան Ընդհ. Պատգամաւորական Ժողովի կանչելու:

35.— Կեդրոնական Վարչութիւնը պարտաւոր է իր տարեկան տեղեկադրութիւնը եւ հաշիւները տալ Պատգամաւորական Ժողովին:

36.— Կեդրոնական Վարչութիւնը կը վարէ Միութեան դիւնական եւ հաշուական բոլոր դործառնութիւնները, եւ պատասխանաւոր է, թէ՛ անհատապէս

եւ թէ՛ հաւաքաբար իր բոլոր ձեռնարկներուն ու գործունէութիւններուն մէջ, Պատգ. Ժողովին:

37.— Կեդրոնական Վարչութեան հրաժարող անդամներուն տեղը գրաւելու համար, կը կանչուի յաջորդ առաւելացոյն քուէ ստացողները լսու կարգի:

38.— Կեդրոնական Վարչութեան անդամ մը նոյն առեն չկրնար մասնաճիւղի վարչութեան անդամ ըլլալ:

39.— Կեդրոնական Վարչութիւնը հաւաքաբար, մէկ քուէով կրնայ մասնակցիլ Պատգամաւորական Ժողովին, իր իրաւունքը յանձնել իր անդամներէն մէկին. Եւ Կեդրոնական Վարչութեան միւս անդամները՝ ներկայ կը գտնուին Պատգամաւորական Ժողովին ու կը շասնակցին վիճաբանութիւններուն իրը խորհրդատու:

40.— Դրամատունէն որեւէ գումար հանելու համար վճարագիրը (չէֆ) պէտք է ստորագրուած ըլլայ Առենապետին ու Գանձապահին կողմէ:

41.— Կեդրոնական Վարչութեան կեդրոնատեղին Պատգամաւորական Ժողովին կ'որոշուի:

42.— Մասնաճիւղեր իրենց յարմար տեսած պարագային, Կեդրոնական Վարչութեան լուր տալէ վերջ, կրնան մէկը զրկել Կեդրոնական Վարչութեան Ժողովին ներկայ ըլլալու եւ տեղեկութիւններ առնելու:

43.— Միութեանս գործատունները կը վարուին Կեդրոնական Վարչութեան կողմէ:

44.— Վերաշինական Միութեան ձեռքին տակ գըտնուած շարժուն եւ անշարժ կալուածները (ֆէլիք, եւն., եւն.) Միութեանս Կեդրոնական Վարչութեան կողմէ կը գեկավարուին:

ՊԱՏԳԱՄԱԼՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

45.— Պատգամաւորական ժաղավը պիտի զումարուի տարին անդամ մը, Մայիս ամսոյ մէջ: Իսկ երբ Կեղրոնական Վարչութիւնը հարկ տեսնէ, կրնայ արտակարգ Պատգամաւորական ժողով գումարել մասնաձիւղերուն լուր տալէ երկու չարաթ վերջ:

46.— Ամէն պատգամաւոր միայն մէկ ձայն կրնայ ներկայացնելու: Մասնաձիւղեր միայն իրաւունք ունին իրենց պատգամաւորը ընտրելու, եւ անդամներ միայն կրնան պատգամաւոր ընտրուիլու:

47.— Իւրաքանչիւր Մասնաձիւղ իրաւունք ունի իրքուէատու անդամներու թիւին համեմատութեամբ, պատգամաւորներ զրկելու Պատգամաւորական ժողովին: Հինգէն յիսուն անդամ ունեցող մասնաձիւղեր մէկ պատգամաւոր միայն կրնան ունենալ: Յիսուն եւ մէկէն հարիւր՝ երկու պատգամաւոր, եւ այսպէս մէկ պատգամաւոր իւրաքանչիւր յիսուն անդամի համար:

48.— Մասնաձիւղերու գանձէն կը հոգացուի պատգամաւորներու միայն ճանապարհախոսը:

ՎԵՐՋԱԲԱՆ

49.— Այս կանոնագրի յօդուածները կրնան վոտիութեան ենթարկուիլ միայն Պատգամաւորական ժողովին կողմէ:

50.— Երբ Սերաստիոյ Վերաշնութեան Միութիւնը լուծուի, անոր բոլոր դրամներն ու գոյքերը պիտի զրկուին Ամերիկայի մէջ զոյսութիւն ունեցող ամենահեղինակաւոր Սերաստացիան Նորաստամասոյց ընկերութեան:

Մայիս 31, 1931  
Նիւ Եորփ Սիրի



— 8 —

ՀՀ Ազգային գրադարան



NL0142564

10

444

14506